

ԽՆՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ՀԵՐՈՍԱՍԱՐԵՐՈ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ*

Եղիկ Մինասյան

Բանալի բառեր՝ Խնուսի գավառ, ինքնապաշտպանական հերոսամարտեր, Խնուս բերդ, Գարազոպան, Գովանդուք, Հարամիկ, Քաղքիկ, Չառլմե, Արոս, Հարք-Խնուս, Զրաղացի Կրիվը:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարով ու մաքարումներով հարուստ հազարային պատմության մեջ 1915 թ. գրվեց ամենամռայլ էջը: Օսմանյան Թուրքիան՝ հանձինս Երիտրուլք հանցավոր պարագլոխների, օգուզերով առաջին աշխարհամարտում ստեղծված հայրնար ռազմաքաղաքական իրադրությունից, իրավանացրեց նախօրոք ծրագրած ցեղասպան քաղաքականությունը՝ հայոց Մեծ Եղեռնը, որին զոհ գնացին ավելի քան 1,5 մլն արևմտահայեր: Հայ ժողովրդը, նրա հասարակական-քաղաքական ուժերը, հատկապես երեք ազգային կուսակցությունները՝ դաշնակցությունը, հնչայաներն ու արևմտականները, հայոց Եկեղեցական կառույցները, համարժակի գալով, ցավոք չկարողացան արժանի կերպով դիմագրավել այդ ամենաահավոր փորձությանը:

Արևմտահայության և նրա քաղաքական ու Եկեղեցական կառույցների ճակատագրական վրահպատճ արդյունք էր 1908 թ. Երիտրուրքական հեղաշրջման թյուրքաբռնման: Այն ջատեց արևմտահայության մարտական ու քաղաքական ուժերը: Ոչ միայն հասարակ ժողովրդը, այլև հոգնոր և ազգային-քաղաքական ղեկավարությունը հավատացին Երիտրուրքերի կողմից առաջ քաշած ազատություն, արդարություն և հավասարություն կեղծ հեղափոխական լոգունգներին: Եեղաշրջման միջոցով և այս ապակողմնորոշիչ լոգունգներով իշխանության Եկած Երիտրուրք ոճրագործները կարողացան գինաքափել արևմտահայությանը ոչ միայն ռազմական առումով, ամբողջ ֆիդայությունը թողեց զենքը և անցավ խաղաղ աշխատաբար, երբ Թուրքիան ներքաշվեց առաջին աշխարհամարտի մեջ, համազգային թմբիրը դեռևս շատ ուժեղ էր: Ուստի պատահական չէ, որ հայոց ցեղասպանության այնպիսի նախանշաններ ու նախապատրաստություններ, իմասիսիք էին արևմտահայության տնտեսական լիակատար քայլայումն ու զորահավաքի անվան տակ 20-45 տարեկան ամբողջ արական բնակչության հավաքումն ու ոչնչացումը չկարողացան հաղթահարել այդ մահացու թմբիրը [1]:

Բացի այդ՝ բացասական դեր խաղացին նաև հասարակության տարբեր շերտերի միջև գոյությունը ունեցող հակասություններն ու անմիաբանությունը: Ստեղծված այսպիսի իրադրության մասին է ներկայացնում դեպքերի ժամանակակից ու մասնակից, նշանավոր ազգային, պետական ու քաղաքական գործիչ Կարո Սասունին՝ նշելով. «Հայ պաշտոնական շրջանները՝ Պոլիսեն մինչև հեռավոր գավառները, հնագանդություն, համբերություն և խոհեմության հորդոր կարդացին հայ ժողովրդի զիլուն, երբ անզինվոր, շալակավոր և պարտադիր աշխատանքի բանվոր և պարեն տապով կմախք կուառնար և իր դառնությունները կիայտներ: Եղեռնը փաստորեն կալսեր գորահավաքի օրերեն, հայ ժողովրդը ֆիզիկապես և բարոյապես կկուտորակվեր և սակայն կիամբերեր, կարծելով, թե դանակը դեռ ուկորին հասած չէ: Կտանգված հայությունն այսպես կմտածեր, թե՝ կեղորնի և թե՝ ծայրագավառներուն մեջ: Անշուշտ կային ըմբուտության կոչեր, կային

* Հոդվածն ընդունվել է 29.01.2016:

Հոդվածը տպագրության է Երաշխավորել ՍՍՀ պատմության ամբիոնը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

անհնագանդ անհատներ, կային խմբակներ, որ առաջին օրեն դիմադրելու մտածումն ունեցան, սակայն ասողնք բոլորը չնշին փոքրամասնություն մը միայն կկազմեին և պատասխանատու անհատներ չեին: Վտանգը համահյակալական էր, ու այդ վտանգին դեմ՝ հայության հավաքականությունը, վերից վար, խոհեմության և զգուշության քաղաքականությունը կվարեր և թուրք պետության սահմաներուն մեջ հավատարիմ քաղաքացիի պարտականությունները կվատարեր ժայրահել գոհողություններով» [2]:

Սակայն 1915 թ. Հայոց մեծ եղեռնի ընթացքում արևմտահայության մի հատվածը, այնուամենայնիվ, ընդվզեց թուրք ժեղասպանների դեմ՝ նրանց հակադրելով իր դարավոր դիմադրական ոգին, ընտրելով գիտակցված մահը՝ ինքնապաշտպանական դյուցազնամարտ մնեց անարգ թշնամու դեմ՝ Տարոն աշխարհից, Մուշից, Խոնուսից ու Սասունից մինչև Վան, Սուսա լեռից մինչև Ուրֆա, Տրավիզոն, Պոնտոս ու Շապին Գարահիսար: Դրանք հայոց դյուցազներգության նոր էջեր էին՝ գիտակցված ընտրություն պատվավոր մահվան և տարագության ճանապարհներին ոչնչացման միջն:

Հաճախ հարց է ծագում. ինչպէ՞ս եղավ, որ 1915 թ. հայկական որոշ շրջաններ ինքնապաշտպանության դրոշ պարզեցին և գիտակցված մահվան գնացին, իսկ այլ շրջաններ անձնասովուր եղան թուրքական յաքաղանին: Ինչո՞ւ ի հնարավոր չեղակ համակարգել և փոխօգնության կապ հաստատել ինքնապաշտպանության դիմած տարբեր շրջանների միջև: Փաստորեն, 1915 թ. արևմտահայությունը չուներ ինքնապաշտպանության կամ ապստամբության ինքնուրույն ծրագիր: Կազմակերպական թերությունների պատճառը հենց ինքնապաշտպանության ինքնաբուխ բնույթն էր: Ակնհայտ է, որ հայերը ինքնապաշտպանության են դիմել՝ մեծ մասամբ հապճեա արծագանքելով իրադարձություններին և նրանց գործողությունները թելադրված են եղել իրադրության սրությամբ: Այս ցավալի իրողությունը միաժամանակ ապացուցում է հայերի հասեեն թուրքական պաշտոնական քարոզությամբ տարածվող այն մեղադրանքի անհիմն լինելը, թե իբր հայերն «անհուսալի տարր էին՝ խրովարար, ապստամբ, թիկունքից հարված հասցմելու ընդունակ»: Եթե այդ մեղադրանքը համապատասխաններ իրականությանը, ապա, նախ՝ հայերի ինքնապաշտպանությունը կլիներ ոչ թե օջախային, այլ՝ զանգվածային, երկրորդ՝ այս ավելի մեծ թվով դեպքերում հաջող ելք կունենար և չէր ավարտվի քաջամարտիկների եղեռնական կոտորածով կամ հերոսական ինքնապանությամբ, ինչով ավարտվեցին, օրինակ, Շապին Գարահիսարի և Ուրֆայի հերոսամարտերը: Եվ երկրորդ, եթե Օսմանյան կայսրության հայ բնակչությունը պատրաստ լիներ և մտադրություն ունենար, թիկունքից հարված հասցնելու», ապա զենքի և պարտիզանական պայքարի մարտավարության իմունքներին տիրապեսող տղամարդկանց պակաս, ցավոք չէր զգացվի, և թուրքական կառավարությունն էլ այդքան հեշտությամբ չէր կարողանա եղած առաջնորդներին մի հրամանով հավաքել, աքսորել կամ կոտորել՝ չհանդիպելով ոչ մի դիմադրությամ: Հայերի ինքնապաշտպանության պատմությունը ցույց է տալիս, որ այստեղ, որտեղ հայերը մնացել են առանց առաջնորդի, որտեղ չեն եղել պայքարի կոչող և պայքար կազմակերպող անհատներ, (ցավոք մեծ մասամբ այդպես է եղել), բնակչությունը կոտորվել է գրեթե առանց դիմադրության:

Ուզմական առումով, ցավոք, հերոսամարտերի մի զգալի մասն ավարտվեց պարտությամբ, որը, սակայն, երբեք չնսեմացրեց նրանց հերոսականությունն ու պատմական նշանակությունը: Այդ մասին իրադարձությունների մոտ կանգնած հայ նշանավոր պատմաբան Ա. Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)-ը գրում է. «Սակայն եղան գյուղեր, գտնվեցին շրջաններ, որոնք լուր գլուխ չծրեցին դահճի առաջ, որոնք բոլորեցին, ըմբուստացան և փարելով զենքին, դիմադրեցին տաճկական յաքաղանին: Ճշշտ է, կրիվ անհավասար էր, ուժերը անհամապատասխան և շատերը զենք վերցնողներից

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նոյնապես ընկան, բայց քաջաբար, ընկան հարվածելով թշնամուն, ընկան փրկելով ցեղի անոնքը, դրա հետ նաև նրա գոյությունը»: [3]

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին 1914 թ. Խնուսի գավառը վարչականորեն մտնում էր Էրզրումի (Կարին) նահանգի մեջ: Գավառի 33 հայկական գյուղերում (այլ տվյալներով՝ 35-38) ընդհանուր առնամբ ապրում էր 26 հազար հայ: Առավել խոշոր գյուղերն էին Գարաչորանը (3 հազար մարդ), Գարաքոփիրին (1,5 հազար մարդ), Խոզին (1,9 հազար մարդ), Գովանդուկը (1,5 հազար մարդ), Հարսմիկը (1,5 հազար մարդ), Չառումն (Չկիրմե) (1,8 հազար մարդ), Գոպալը (1,4 հազար մարդ), Արոսը (1,2 հազար մարդ), Խալչառուշը (Խաչալույս)-1,1 հազար մարդ), Թաղթիկը (1,1 հազար մարդ): Հայաբնակ էր նաև գավառակենտրոնը՝ Խնուս բերդաքաղաքը (3,1 հազար մարդ): [4]:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց ամսիջապես հետո ամբողջ արևմտահայության նման նրա մի մասը կազմող Խնուսի գավառի հայության դրույթունն սկսեց օրեցօր վատանակ: Չորակոչը, թաղան ու տարբեր տեսակի բռնությունները հայ ժողովրդի համար ստեղծել էին անտանելի և անհանդուրժող դրույթուն:

Համինեական քրոջական հեծելագործք կենտրոնացավ Խնուս Բերդ, Գարաչորական, Գովանդուկ, Հարսմիկ և Չառումն հայկական գյուղավանների մեջ, որոնք կառավարության կողմից պարտավորվեցին մոտակա հայ գյուղերի մասնակցությամբ պարենավորել նրանց: Բարեբախտաբար կարծ ժամանակ ամց սրանք փոխադրվեցին Կարին-Բասեն-Ալաշկերտ ռազմաճակատ: Բացի գորազնդին տված հարկերից՝ հայ բնակչությունը պարտավոր էր տալ նաև «մեքելիթի Հարավի» պատերազմի հարկադրանքի պետական պարտադիր փոխառություն, որով հայ բնակչությունը պարտավոր էր իրենից պահանջված ամեն ինչ տալ պետությանը, այդ թվում, եզից, կովից ու ոչխարից բացի, ցորեն, գարի, խոտ անգամ ձեր ու ձրագ: Այս ամենի դիմաց հարկահավաք պաշտոնյան տրամադրում էր հասարակ բույջ, որը իրենից որևէ արժեք չէր ներկայացնում[5]:

1914 թ. դեկտեմբերին կազմվում են բեռնակիր գնդեր, որոնց մեջ բռնությամբ ներառում են նաև հայ կանանց, որոնք շալակով բեր էին կրում մինչև Կարին, Բասեն և Ալաշկերտ: Նրանցից շատերը զոհ գնացին ծմբան քքին ու ցրտին, ոմանք էլ սովածությանն ու համաձարակին[6]: Ինչպես վկայում է թուրքական բանակում զորակոչի ենթարկված, այդ բանակի զինվոր, տասնապես Հարամիկ գյուղից Եղիշե Սելիքյանը «դեկտեմբեր-հունվար ամիսներին հայ զինվորներին թուրք հրամանատարները զինաթափ արեցին և ուղարկեցին «Պատ Բոյնի» խրամատների ճանապարհները նորոգելու աշխատանքներին, որտեղից նրան հաջողվում է փախչել և թաքնվել հայրենի Խնուսություն»[7]: Նոյն Սելիքյանը նկարագրում է Խնուսի հայերի վիճակի օրըստոք ժանրացումը հատկապես այն բանից հետո, երբ 1914թ. աշնանը Զուխուրա Սուսա բեյը իր 20 հազարանց հրոսակներով Բուլանուխի վրայով Խնուս Եկավ՝ Բասենի ճակատ գնալու համար: Սակայն նա իր ճանապարհի վրայի Խնուսի հայկական գյուղերը սարսափի ու թաղանի ենթարկեց և 700 հեծյալներով մեկ շաբաթ Հարամիկ գյուղում մնալով նոր տանջանքներ ու տառապանքներ պատճառեց գյուղացիներին ու գյուղի ռես Տերտերոց Արշակի (որը գյուղից բացակայում էր) Եղրողը Գարեգինին սարսափելի զանակուժման ենթարկել տվյալները: Այդ օրերին տառապանքի ենթարկված Խնուսի հայ բնակչության ժամը վիճակի մասին ահա թե ինչ է գրում Խնուսի հոգևոր առաջնորդ Արքար Վարդապետ Յոթնեղրայրյանը Կ. Պոլսի Հայոց ազգային Պատրիարքարան ուղարկած, 1914թ. հոկտեմբերի 10-ով թվագրված իր գեկույցում: «Կրակի գծին մերձավոր հայ ազգաբնակչությունը պետք ունի գերմանակային համբերության այս անտանելի տառապանքին: Այսօր որոշված է 50 քյուրտ հեծելագործ դրկել վիճակին Գոպալ գյուղը

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

խուզարկելու համար..., կը զգամ թե առանց իրական փաստի, ի՞նչ ահ ու սարսափի պիտի մատնվին խեղձ գյուղացիները:

... Վերջապես կապրինք տագնապալի օրեր և շվարած ենք, թե ինչպես և ինչով միսիթարկվենք անսուուգության մեջ տվյալող հայ ժողովուրդը»[9]:

Խոնուի հայ բնակչության վիճակը առավել ժամրացավ այն բանից հետո, երբ 1917թ. փետրվարին Մուսա բեյի համիդեակամերին փոխարիմեց Բաղդատի արարական զորաբանակը, որը եկել էր Խոնուի վրայով Դութաղ ռազմաճակատ մեկնելու: Ակգրում նրանք լավ վերաբերմունք ունեին հայերի հանդեպ, սակայն պարտությունից հետո, երբ նահանջեցին, ծմրան ցրտերին լցվելով Խոնուի հայկական գյուղերը, սկսեցին սուկալի հալածանքներ կիրաւել հայերի հանդեպ: Նոյն կերպ Ակաշկերտի և Սանազկերտի քրդերը, ռուսական բանակի առաջնադաշտումից փախչելով, Խոնու էին լցվում և կատարյալ պատուհաս դառնում հայկական գյուղերի համար[10]: «Հայր իր սեփական տուններ դուրս կիանվեր և թուրք ու քուրդ գաղթականները կտեղապորվեի: Եկող գաղթականները կապրեին հայու հացով ու ջրով,- գրում է Ե. Մելիքյանը»[11]:

Թուրքական իշխանությունները, ծրագրելով խնուսահայության ոչնչացումը, գիսավոր ոերում նախատեսել էին քրդերին՝ Համիդի գնդերին և քրդական հրոսակամբթրին: Հայտնի է, որ Խոնուի գավառը և նրա հարակից շրջանները քրդական խոշոր ցեղերի բնակավայրերից էին: Զարդերի ընթացքում քրդերին անմիջականորեն աջակցելու էին թուրքական ոստիկանությունն ու ժանդարմերիան: Եղիշէ Մելիքյանը իր «Խոնուի տեղահանությունը և դիմադրությունները» հոդվածում թվարկում է խնուսահայության ջարդերի ղեկավար ու մասնակից քուրդ աշխրեթներին[12]: Խնուսահայության ջարդի ղեկավարներից նա առանձնացնում է Գայմազամ Թահիր բեյին, Բիթլիսի Ալի աղային, Հաճի Խսաֆ էֆենդուն, Նուրատին բեյին, Մուհատին բեյին, Մահմուտ աղայի տղային՝ Շաքրին, Ֆորդա Գումանտան Հաճի Համտի բեյին, Քեարիա Սիրզային, Խոնուի Խատիին, Խոլիսասարի Շեյխ Սայիդ Էֆենդուն, Խորքա Շեյխ Մուրադի տղային՝ Նուրիին: Խոկ ջարդին մասնակցելու մեղսակից քուրդ ցեղապետերից առանձնացնում է Ջիբրանցի աշխրեթից՝ Ֆեյզի բեյի տղաներին ու թոռներին, Մելիմ բեյին, Ազմային, Սատի տղային ու նրա զավակներին, Բըլըքցիներից՝ պազակապետ Շահօ-Խալոյի տղաներին՝ Թաժնոյին, Համզոյին, Օզմանի Ալիին ու Նատոյին: Չըոքքցի աշխրեթներց՝ Խուլիսան բեյին ու իր տղաներին՝ Ուսոյին ու Մոռոյին: Հասանանցիներից՝ Գոպալի Ուսուֆ աղայի տղային՝ Ֆեզլիին և ուրիշների[13]:

Փաստորեն, հիմնականում խնուսահայության կոտորածի ղեկավարներն ու մասնակիցները եղել են քուրդ ցեղապետերը՝ իրենց ընտանիքներով: Ինչպես ամենուրեք, հայերի հնարավոր դիմադրությունը կանխելու նպատակով ջարդերից առաջ երիտրուրք իշխանությունների հրամանով 1915թ. մարտի սկզբներին տեղի հայության առաջնորդներն ու նրանց մեջ հեղինակություն Վայելոր առավել նշանավոր մարդիկ ծերբակալվեցին, որով գիսատվեց խնուսահայությունը: Խոնու բերդաքաղաքում և տարբեր գյուղերում ծերբակալվեցին 150 նշանավոր հայեր, որոնց թվում առաջնորդարանի քարտուղար՝ Կարապետ Մալխասյանը, Արու գյուղի վարժապետ, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի շրջանավարտ Հրայր Ղանոյանը՝ քրդերն այբուբենի և քերականության հեղինակը, Խալո-Մելքոնի տղա Կահանը, Հովհաննես Շահմուրադյանը, Իվան Սիմոնյանը, Մկո-Հովոյի Սուքիան ու Արշակը, Թրմոյան Արամը, Փալանջյան Գևորգը, Խազինայան Ավետիս աղան և նրա մեջ տղան՝ Արսենը, Անթոյան Մուշեղ աղան, Ակեբսան Էֆենդին և իր տղան՝ Կնյազը, Հարամիկցի Մուրադյան Հակոբի տղան՝ Տիգրանը, Մելքոնի Խուրշուրը, Բերդեցիներ՝ Միքայելյան Մելքոնը, Մուկոյան Միսակը, Ճուրե

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Սարգիսը և ուրիշներ: Նրանց մեծ մասը դաշնակցական էր[14]: 4 օր Խնուսում բանտարկվելուց հետո, նրանք չեթեների և ժանդարմների հսկողությամբ շղթայակապ տարվում են իրեն Կարին դատվելու: Իրականում Խնուսահայության դեկավարությունը տարվել էր Դերջան-Երզնկա ճանապարհի վրա գտնվող Սանսար-Դարա Կիրճը (Շողալարի ծոր) և ոչնչացվել[15]:

Հայտնի է, որ պատերազմի մեջ մտնելուց 1914թ. դեկտեմբեր-1915թ. հունվար ամիսներին կարձ ժամանակ անց, Թուրքիան կրեց իր առաջին խոշոր պարտությունը Սարդարապահի ժակատամարտում: Կախենալով, որ ռազմաճակատի գծին մոտ գտնվող Խնուսի գավառը կարող է գրավել հարձակվող ռուսական գործերի կողմից և իրենց չի հաջողվի ոչնչացնել տեղի հայությանը, թուրքական իշխանություններն այստեղ գգալիրեն ավելի շուտ սկսեցին ցեղասպանության ծրագրի հրականացումը: Նույնպիսի շուապողականությամբ և օպերատիվությամբ նրանք գործում էին նաև մերձակատային մուս շրջաններում[16]: Թուրք և քուրդ ցեղասպանների կողմից Խնուսի գավառի հայության ոչնչացումը հրականացվեց 1915 թ. մայիսի սկզբին մի քանի օրերի ընթացքում: Սակայն բոլոր վայրերում չէ, որ թուրք-քրդական ոճագործները իրենց սև գործը կարողացան կատարել հեշտությամբ ու անարգել: Մի շարք գյուղերում տեղի ունեցան հնքնապաշտպանական հերոսամարտեր, որոնց արդյունքում ջարդարարները կրեցին զգալի կորուստներ, իսկ բնակչության մի զգալի մասն էլ կարողացավ փրկվել: Հարկավոր է նշել, որ ընդհանուր առօնամբ Խնուսի գավառը բավականին լավ էր նախապատրաստված ինքնապաշտպանությանը, քանի որ հայ ազգային, քաղաքական կուսակցությունները և մասնավորապես ՀՅԴ-ն տասնամյակներ շարունակ տևական աշխատանք էր կատարել այստեղ: Զպեսոք է մոռանալ, որ գավառը գտնվում էր Արևմտյան Հայաստանի Յառավել հայաշատ Վանի, Բաղեշի (Բիթլիս) և Կարինի (Էրզրում) նահանգների սահմանագիծին և ռուսահայաստանից դեպի Երկիր գենքի, զինամթերքի և ֆիդայիների տեղափոխման կարևորագույն հանգրվաններից մեզն էր[17]: Սակայն այդ ամենով հանդերձ, ըստ Եղիշէ Մելիքյանի լայնածավալ և հաջող ինքնապաշտպանություն, այնուամենայնիվ, չստացվեց[18]: Նա հետևյալ կերպ է դա բացատրում. «Ընդհանուր հոգեբանությունն այն էր, թե ռուսը շուտով պիտի գրավեր Խնուսը: Այս հոգեբանության հետևանքով հայերը որևէ լուրջ պատրաստություն չտեսան պաստամբության կամ ինքնապաշտպանության համար: Մասմակի պատրաստություններ կային միայն քանի մը գիւղավոր գյուղավաններու մեջ...»[19]: Բացի այդ, ինչպես վկայում է Եղիշէ Մելիքյանը, խնուսից մի քանի ազդեցիկ քուրդ ցեղապետներ խնուսահայությանը հավաստիացրել էին, որ եթե իշխանությունները ծերնարկեն հայերի կոտորած, ապա իրենք պարտավոր են պաշտպանել նրանց: Հայերը ևս պարտավորվեցին պաշտպանել քրդերին, երբ ռուսները գրավեն Խնուսը: Սակայն ռուսական հրամանատարությունը դադարեցրեց իր գործերի առաջխաղացումը, և իրադրությունը կտրուկ փոխվեց: Հայերին «պաշտպանող» քուրդ ցեղապետները, անշուշտ, թուրք կառավարության հրահանգով, օգտվելով առիթից, փոխեցին իրենց որոշումը, մոռացան իրենց խոտումը և սկսեցին համագործակցել իշխանությունների հետ՝ նպատակ ունենալով մասնակցել տեղի հայ բնակչության կոտորածին և ունեցվածքի թղթամիջնի[20]:

Գավառում ջարդերն սկսվեցին 1915թ. մայիսի 1-ին: Քրդական Համիդիե հեծելագնդերի և քրդական հրոսակախմբերի հարձակման առաջին թիրախները դարձան Գովանդուկ (Կովնոտուկ), Սալվորի (Սարգուլի) և Խորմիսայա (Կորմկայա) գյուղերը:

Գովանդուկի, Սալվորի և Խորմիսայա գյուղերի ինքնապաշտպանական մարտերը: 1915թ. մայիսի 1-ին Գովանդուկ գյուղ ներխուժեցին քրդական հեծյալ ջոկատն ու շրջա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

կան քրդական գյուղերի խուժանը: Գյուղը բաղկացած էր 120 տուն հայ բնակիչներից[21]: Քրդական համիդեական հեծյալները սկզբում իրոն կյուրեր իշխանեցին գյուղի հայկական տներում, ապա, հանկարծակի բերելով բնակչությանը, սկսեցին ջարդն ու թալանը: Նոյն պահին նրանց միացավ մերձակայքում գտնվող քրդական խուժանը: Այս ամենը տեսնելով՝ հայ գյուղացիների գինված խումբը փորձառու հայդուկների՝ դաշնակցականներ Միերի Դավթի, Համազասապ Մալխասյամի և հնչալյան Ավեքսամորի գլխավորությամբ, գյուղում դիրքեր բռնելով, օրիհասական կրիկ մղեց թշնամու դեմ՝ ստիպելով նրան փախուստի դիմել: Թշնամու նահանջցո օգուզելով՝ գինյալ փոքր խմբի պաշտպանությամբ գյուղի անգեն բնակչությունը կարողացավ փախչել հարևան Գարաչորան գյուղավանը, որը խնուս բերդաքաղաքից հետո գավառի ամենախոշոր բնակավայրն էր, որտեղ նստում էր Նահիեի՝ (գյուղախմբի կենտրոնի) մուրդիրը՝ նրա պաշտպանությունը հայցելով[22]:

Նահանջող թշնամին, նկատելով, որ գյուղը դատարկվել է, վերադառնալով, վճռական հարձակում ձեռնարկեց, որի արդյունքում գրավեց գյուղի մի մասը: Սակայն հայ մարտիկների խումբը կրիկը շարունակեց մինչև ուշ երեկո՝ հնարավորություն տալով մի պայմաններում բնակչության մի մասին իրենց հետ միասին բարձրանալու գոգալ Պապա լեռը: Այստեղից էլ նրանց միացած բազում հայերենակիցների հետ որոշեցին անցնել ռազմաճակատի ռուսական գիծը[23]: Նոյնը կրկնվեց նաև Սալվորի փոքրիկ գյուղում, որը բաղկացած էր 30 տուն հայերից[24]: Նոյն օրը Համտի բեյի քրդական համիդեական հեծելագունդը քրդական խուժանի հետ հարձակվեց Սալվորի հայկական գյուղի վրա: Այստեղ ևս մի խումբ հայ ինքնապաշտպաններ՝ գյուղացիների գինյալ խումբը, հերոսաբար կրվելով, լուրջ դիմադրություն ցույց տվեց թշնամուն՝ դիմագրավելով հակառակորդին այնքան ժամանակ, մինչև որ անգեն բնակչությունը կարողացավ հեռանալ Գարաչորան: Միայն դրանից հետո նրանք նահանջեցին, իսկ գյուղը ենթարկվեց թալանի[25]:

Սայսի 2-ին նոյն բախստին արժանացավ Խորմիսայա (Խորմիսայա) գյուղը, որը բաղկացած էր 45 տուն հայ և 5 տուն քրդերից[26]: Գյուղը ենթարկվեց Վերոնշյալ Համտի բեյի համիդեական հեծելագունդի հարձակման: Անգեն ժողովուրդը, հանկարծակի գալով, փախուստի դիմեց, մինչև գյուղացիներից կազմված գինված խումբը, կրվելով թշնամու դեմ, ապահովվեց Գարաչորան տանող ծորանցքի ճանապարհի անվտանգությունը, որն էլ հնարավորություն տվեց փախչող ժողովրդին ապաստանելու Գարաչորանում: Գյուղում մնացողները ենթարկվեցին կոտորածի, իսկ գոյքն ու ունեցվածքը թալանվեց: Զինված խումբը բարձրացավ Գոզալ Պապա լեռը՝ միանալով այստեղ հավաքված խմբին[27]:

Գարաչորանի (Կարաչորան, Խարաչորան) և Գոպալի (Կորալ, Գորալան) ինքնապաշտպանական հերոսամարտերը: Առավել ծանր դիմադրական մարտեր տեղի ունեցան Գարաչորանում, որը Խնուս գավառի հայաբնակ գյուղերից ամենամեծն էր, ուներ 220 տուն հայեր, բազմանարդ էր և նյութական նախանձեյի վիճակով գյուղավան էր[28]: Երիտրուրքական իշխանությունները, հաշվի առնելով այստեղ ապաստանած հայերի թիվը և հնարավոր ուժեղ դիմադրությունը, կենտրոնացնում են մեծ քանակությամբ ուժեղ[29]: 1915թ. մայսի 2-ին Գարաչորանի մյուրիրը այստեղ հրավիրեց Օսման չառչի գլխավորած մի դասակ՝ ժամդարմներով ու հեռագրատան պաշտոնյաներով, ինչպես նաև քուրու ցեղապետերի առաջնորդներ Սոռոյի և Սևափին դեկավարած չեթեններին՝ իրականացնելով Գարաչորանի հայության կոտորածի և թալանի ծրագիրը: Շրջակա հայ գյուղերի դեպքերը պատրվակ բռնելով՝ մյուրիրը իր մոտ հրավիրեց նաև Հազրոյի տղաներին՝ Խարաչելին, որը գյուղի մյուրիրն էր Եղել, Գասպարին, Կիրակոսին

ՄԵԾՐՈՒԹ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ու Զաքարյան Եղիշեին և առաջարկեց պաշտպանել նրանց՝ ակնկալելով մեծաքանակ գումարի տիրանապել[30]:

Եղիշե Զաքարյանին հաջողվեց ճարպկորեն նյութիրի մոտից դուրս գալ և փախչելով՝ միանալ Տերտերոց Սիմոնի ղեկավարությամբ զինված ու կրվին պատրաստ խմբին, որի մեջ էին նաև հայտնի կրվողներ Համազասպը, Շապուհը, Բուղաղի Տիգրանը և ուրիշներ: Սյուրիդը առաջարկեց հսրայելին խոսել ու համոզել հայերին զինաքափի լինել և համձնվել իր պաշտպանությամբ, ինչպես հսրայելը իր քննուանքի հետևանքում էր աղետալի հետևանքներով բնաջնջել հայ բնակչությանը՝ օրինակ բերելով այս գյուղերը, որտեղ փորձել են դիմադրել: Մի կողմից՝ նա համոզում էր հայերին զինաքափի լինելու, մուս կողմից՝ գաղտնի հրահանգում էր քրդական համրդեական հեծելագոնին պաշարելու գյուղը[31]:

Սայիսի 2-ի կեսօրին քրդական հեծելագունդն ու խուժանը հարձակվեցին Գարաչորանի վրա: Առաջին գրոհը հայերը հետ մղեցին՝ թշնամուն պատճառելով ծանր կորուստներ: Կորցնելով 59 հոգի՝ թշնամին նահանջում է: Սյուրիդը և Օսման չառւշը, տեսնելով քրդերի պարտությունը և գետնին փրկված դիակները, խիստ զայրանալով, տեղն ու տեղը սպանեցին Հազր հսրայելին ու նրա եղբայրներին, ինչպես նաև նրանց մոտ ապաստանած բոլոր անգեն հայերին, իսկ Մոռոյին և Աևտինին նորից հրահանգեցին կոտորել բոլոր հայերին[32]:

Թշնամու նոր հարձակումով կրիվը վերսկսվեց: Սակայն հայերին հաջողվեց հետ մղել թշնամու բոլոր գրոհները և ապահովել անգեն բնակչության անցումը Գոզալ Պապա լեռը: «Թշնամին, միշտ զիրենք հալածելով, կը հետեւի իրենց: Սակայն, զինելա խումբը, միշտ կրուելով, հերոսական ձիգերով՝ կարգի թշնամին հասնելու անգեն ժողովուրդին, - գրում է Եղիշե Մելիքանը»[33]: Միայն Սիմոն Տեր-Հովհաննիսյանը իր 25 հոգանոց խմբով սպանեց 25-ից ավելի քրդերի և թշնամուց խլեց 5 հրացան[34]: Նրա խմբից 18 հոգին, բաժանվելով անցան Գրգոր-Քարա գյուղը, որտեղ շրջապատվեցին քրդերի կողմից: Այստեղ 3 օրվա ինքնապաշտպանության արդյունքում նրանց հաջողվեց 2 քրդերի սպանելով անվնաս հասնել Մանազկերտ և միանալ ռուսական բանակին[35]: Այսպիսով՝ թուրքական և քրդական երկրորդ գրոհը նոյնպես հետ մղվեց: Սակայն գենքի և զինամթերքի պակասը հարկադրեց խնուսահայությանը նահանջելու: Զինյալ հայկական խումբը նահանջելիս Գոպայ գյուղի մոտ նոր համալրում ստացավ: Նրանց միացավ գոպալցիների զինված խումբը, Տեր-Ավետիսի տղաների՝ Սեղրակի, Միսակի և Կարապետի տղայի՝ Սովետի ղեկավարությամբ: Նրանց հետ էին նաև Գորգմազյան Նազար աղայի տղաները՝ Արամն ու Տիգրամը:

Խումբը Գոպալից Տոբախան-Քեշիշյան գյուղերի վրայով անցնելիս հանդիպեց Խալիլ բեյի հետնապահ ջոկատին, որի հետ կրվի ընթացքում սպանվեց Գովանդուկի ռես Միերի տղան՝ Դավիթը: Նա, լինելով իին հեղափոխական, 101 տարվա դատավճռով Կարին էր բանտարկվել և ազատ էր արձակվել 1908թ. սահմանադրությամբ[36]:

Զինյալ խումբը, Արածանի գետի ափին հասնելով, տեսնելով հորդառատ գետը, ժառերից լաստեր պատրաստեց և դրանց կարչած, ոմանք էլ լողալով անցան գետը՝ առանց արկածներից գերծ մնալու: Փոլկածները, դիմելով ռուսական զինվորական ղեկավարությանը, հանձնվեցին նրան: Ինչպես մնացած դեպքերում, այս անգամ ևս Գարաչորանի հայության շարժական և անշարժ գույքը թալանվեց: Խնուսի շրջանի Գարաչորան գյուղի վիճակյան փոխանորդ Կարապետ քահանա Տեր-Հովհաննիսյանի տված տեղեկության համաձայն՝ 15 հոգանոց խմբով նա ևս դիմել է ինքնապաշտպանության: Դա տեղի է ունեցել այն բանից հետո, երբ իր աչքերով կարդացել է գյուղի մյուլիդին ուղարկված հեռագիրը, որտեղ ասված էր. «Տերութենէն հրամայուած է, որ հայերը բոլոր

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ինչքը և կին ու աղջկմերը իւլամին կը պատկանին: Կոտորոցե՛ք հայերը և ռուս բանակի արջնէն մի փախչիք, այլապէս դուք ևս հայերու պէս պիտի կոտորուիք»[37]:

Հեռագիրը կարդալուց անմիջապես հետո նա կանչեց բոլոր գյուղացիներին, այդ թվում մյուս գյուղերից այստեղ ապաստանած մարդկանց և դրույթունը պարզելով՝ հորդորեց դիմել ինքնապաշտպանության, մինչև որ հնարավորություն ստեղծվի Սանագկերու փախչելու, ռուսական գործին միանալու: Կարապետ քահանա Տեր-Հովհաննիսյանը նկարագրում, է, թե ինչպես ինքնապաշտպանության դիմելով՝ 15 հոգու գոլուսն անցած, զինված, պատրելով քրդերի շղթան, գյուղից դուրս գալով, Դերձկ գյուղի մոտ միացավ իր եղբոր Սիմոն Տեր-Հովհաննիսյանի խմբին, ապա ռուսական բանակի կազմում մասնակցեց ռուս-թուրքական պատերազմին: Միայն Դերձկի մոտ նրանք 500-ի չափ քրդեր կոտորեցին, ապա ռուսների հետ միասին մտան Սանագկերու: 1915թ. հուլիսյան նահանջի ժամանակ նրանք ապաստանեցին Կարսի քերդում, ուր մնացին մինչև փետրվարի 18-ը, ապա, միանալով խնուսցիներին, մտան 6-րդ կամավորական գնդի մեջ, մասնակցեցին երգրումի գրավմանը՝ տալով 3 զոհեր[38]: Խնուսի վերատին գրավման ժամանակ ողջ մնացած գարազորանցիները գյուղ վերադարձան իրենց ընտանիքները փնտելու, սակայն, չգտնելով, այնտեղ իհմք որին 20-ի չափ նոր տների՝ անուսնանալով գաղթական խնուսցիների հետ:

Գոպալի (Կորալ) գյուղի ինքնապաշտպանությունը

Մայիսի 3-ին Խնուսի ծայրագավառի գյուղերից (65 տուն՝ 200-ի չափ հայ և 20 տուն քուրդ բնակչություն) ունեցող Գոպալի (Կորալ, Գորպալան) վրա հարձակվեցին կյապաշի խալիի ղեկավարած քրդական հեծելազորը: Գյուղացիների մի մասը, փախչելով, ապաստանեց հասանանցի աշիրեթ Աճամ-օղլի՝ Յուսուֆ աղայի տղաների՝ Պապայի և Ռաշիդ աղայի գյուղերը, որոնք խոստացել էին ապահովել հայերի անվտանգությունը: Վերապրածների՝ Գոպալ գյուղի բնակիչներ ծարո Նազարյանի, Սիմոն Սխիթարյանի, Հարություն Սերովյանի և Վահան Սարգսյանի վկայություններից պարզվում է, որ Գոպալ գյուղի հայ բնակչությունը, ենթարկվելով քուրդ խալքը թեկի ծիազորների հարձակումներին և կոտորածներին, փախուստի դիմելով, ապաստանել է Տորախան գյուղը՝ թուրք Բարա թուսունի պաշտպանության մերքը: Վերջինս պաշտպանում է հայերին, սակայն թուրքական կառավարությունը, այս բանը իմանալով, ցանկանում է Բարային պատժել: Վերջինս փախչում է գյուղից[39]: Բնակչության մի մասին կոտորելով՝ մյուս մասը միացավ հայերի զինված խմբին, որի օգնությամբ հասավ ռազմաճակասի ռուսական գծին: Ըստ վերապրած ծարո Նազարյանի՝ «Գոպալ գյուղի շրջանի մի քանի հայկական գյուղերի կանանց ու երեխաների մեծամասնությանը կոտորումից ազատեց տորախանցի ծամիլի որդի Բարեն, ազգությամբ տաճիկ: Տաճիկ կառավարությունը այս լսելով՝ մահվան պատիժ նշանակեց, բայց փախավ Տաճկաստանի խորթերը, իսկ մենք գնացինք դեպի ռուսները, որոնք արդեն գրավել էին մեր շրջանը»[40]:

Գոպալ գյուղացիների զինված խումբը՝ Տեր Ավետիսի տղաների՝ Սեղրակի, Սիսակի և Սովուսի ղեկավարությամբ, կրվելով քրդական հեծելազորի դեմ և մեծ կորուստներ պատճառելով նրանց, ապահովեց անզեն բնակչության անվտանգ անցումը դեպի Գոպալ Պապա լեռը, ապա վերջում կրվելով միացավ Գարաչորանի և Գովանդուկի խմբերին: Նրանք, միասին անցնելով ռուսական գիծը, ծառայության անցան հայ կամավորական խմբերով[41]: Գոպալ գյուղից մեկ ուրիշ խումբ ևս՝ Գորգմազյան Նազար աղան և նրա տղաներ Տիգրանը և Արամը, դիմադրելով թշնամուն, կրվելով, անցան ռուսական գիծն ու ազատվեցին քրդական հեծելազորի հետապնդումներից[42]:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Գարաքեռվիրի (Կարաքեռվիրի) գյուղի ինքնապաշտպանական մարտերը

Մայիսի 4-ին 150 տներից բաղկացած Գարաքեռվիրի գյուղի վրա հարձակվեցին հասանացի աշխարհապետերից Իկիթի Ուսուֆ աղան և Խալդր բեր իրենց հեծյալներով: Շուտով նրանց միացավ մոտակա քրդական գյուղերից եկած խուժանը: Անզեն ժողովրդի մի մասը փախչելով ապաստանեց Գարաջոպանում (Կարաջորան), իսկ մյուս մասն էլ՝ Խառնը գյուղի շենքերին բարեկամ ընտանիքները, հանգրվանեցին նրանց մոտ: Լաքքուղաղ գյուղի չերքեզների բարեկամ ընտանիքներն էլ եկան նրանց մոտ[43]: Իսկ հայերի զինյալ խումբը գարաքովիրեցիներ Շապուիի, Սիմո-Գրոյի և Բուդաղի Տիգրանի դեկապարությամբ, ջախջախիչ հակահարվածով եւս շարտեց թշնամուն՝ պատճառելով զգալի կորուսներ: Անպաշտպան բնակչության մի մասի հետ խումբը կրվելով կարողացավ բարձրանալ Գոզալ Պապա լեռը: Գարաքովիրեցի Դավիթ Մուրադյանը ևս կրվելով գյուղից դուրս եկավ, սակայն ընտանիքին փնտրելու համար գյուղ վերադառնալիս սպանվեց: Բուդաղի Տիգրանը, բաժմակելով իր ընկերներից, վերադարձավ գյուղ, որը ավերակ ու ամայի գտնելով՝ անցավ խոզլու գյուղ, որտեղ, քրդերից մի քանի սպանելով, ընկերների հետ փորձեց անցնել Գոզալ Պապա լեռը[44], հերոսաբար կրվի բռնվեց, սակայն Բուրնազ գյուղում քրդերի կողմից նկատվելով և մինչև վերջ թշնամուն բազմաթիվ զոհեր պատճառելով՝ սպանվեց: Բարբարոս թշնամին, կրակի տալով դիրքի վերածած նրա սուսնը, իր ճարակ դարձրեց: Ուուսական բանակի առաջխաղացումով չերքեզները զաղթեցին խոնսից՝ իրենց հետ տանելով իրենց մոտ ապաստանած հայերին: Փաստորեն, Գարաքովիրին մեկ օրվա մեջ իսկական ինքնապաշտպանական հերոսամարտ մղեց, սակայն բնակչության մի մասը կոտորվեց, գյուղը թալանվեց ու ամայացավ[45], բայց մի մասն էլ փրկվեց:

Դուման (Տուման), Մարուֆ և Շաբադին գյուղերի հայ բնակչության ջարդն ու դրմադրական կրիվները

Նոյմ օրը՝ մայիսի 4-ին, Դուման, (բաղկացած էր 70 տներից, որից 60-ը հայեր էին, իսկ 10-ը քրդեր) Մարուֆ (45 տուն հայ բնակչությամբ) և Շաբադին (50 հայ տուն) գյուղերի վրա հարձակվեցին քրդական աշխարհապետերից Դումանի Շահո-Խալոյի տղաների թաժողոյի, Համզոյի և Եղբոր Մոստկոյի ու Ալիի հեծելազորն ու շրջանի քրդական խուժանը: Այս երեք գյուղերից միայն Դումանի մեջ Մուտղատ անունով մի հայ կտրիծ երիտասարդ, իր տան մեջ դիրք բռնելով, հերոսաբար կրվեց թշնամու դեմ 10-ից 12 հոգու սպանեց: Թշնամին, չկարողանալով գրավել անխոցելի համարվող դիրքը, սուսնը կրակի տվեց: Տան հետ միասին այրվեց հերոս քաջորդին: Զարդերից ազատվողների մի մասը փախնել էր Քաղքիկ գյուղ, իսկ մյուս մասն էլ՝ Հարամիկ, որտեղ պատմել էին նշայլ գյուղերի ջարդի մասին:

Աղջամելիք (Խաչամելիք), Բուրնազ (Պուրնազ), Խըռթ (Խըռթ, Հերթ), Ենիգեղ (Ենիգյոյ), Եղողլու (Հել-Հելի) Գասպարի գեղ գյուղերի կոտորածը:

Մայիսի 5-ին 30 հայկական տներից բաղկացած Աղջամելիք գյուղը, պաշարվելով հասանացի աշխարհի քրդերի կողմից, ահավոր ջարդերի ենթարկվեց: Պաշարումը այնքան հանկարծակի եղավ, որ գրեթե ոչ ոքի չհաջողվեց ազատվել[46]: Հայերը սպանվեցին իրենց տների դրմերի առջև: Դիակների տակից ազատված վիրավոր հայ գյուղացիներից մենքը, Հարամիկ գալով, նկարագրեց զազանացած քրդերի վայրագությունները, թե ինչպես սրբություն, կացիններով, եղանակներով ու գերանդիներով զինված խողխողեցին անզեն հայ ծերերին ու երիտասարդներին, կանանց ու տղամարդկանց, մայրերին ու մանուկներին, թալանեցին ու ավերեցին ամրող գյուղը[47]:

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Սայիսի 5-ին Բուրնազի վրա, որը բաղկացած էր 5 տներից, հարձակվեցին Գունդուզայի և Դատավերանի քրդերը՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ հասանանցի աշխեթքներից Արդյ Մեջիսը, իր համիդէալան գործով, որը ռուսական բանակից պարտվելով, փախել էր ու եկել Խնուս։ Նրա գորաբանակը տեղադրված էր Զեռնակ լեռան վրա, բռնել էր Զեռնակի կիրճը։ Զարդերից առաջ ևս նա ահ ու սարսափ էր տարածում Խնուսի և Բուլանուսի հայերի վրա։ Ներևա ջարդերի նախօրյակին Արդյ Մեջիսի ցուցումով Հարամիկից Շահվալսի Սամսոն Մշկան աղայի հանքում նրա քուրդ հեծյալները սպանեցին աղային և տիրեցին հանքին։ Բուրնազի վրա հարձակման ժամանակ Արդյ Մեջիսի հեծյալներն ու Գունդուզայի և Դատավերանի քրդերը լավագույն պատահ համար թալանի բաժանման ժամանակ իրար դեմ կրիկ սկսեցին, որից օգնվելով գյուղի հայության մի մասը փախավ Գարաչորան, իսկ մյուսները ապաստանեցին Խուզու գյուղում[48]։

Սայիսի 6-ին Խըռը (բաղկացած 40 տներից, որի կեսը հայ էր, մյուս կեսը՝ քուրդ), Ենիգեղ (50 տուն հայ բնակչություն), Եղրդու (5 հայ տնից բաղկացած) գյուղերը ևս հարձակման ենթարկվեցին գինված քրդերի կողմից և անխնա կոտորվեցին[49]։ Թալանեցին տնային գույքը, ամբողջ ունեցվածքը՝ անասունների հետ միասին։ Զարդերից մազապուրծ փրկված գյուղի հայերի մի մասը հասավ խոզու, իսկ մյուս մասն էլ, գալով Հարամիկ, պատմեց իրենց գյուղերի ջարդի և թալանի մասին։

Խոզու (Կոզի) գյուղի ինքնապաշտպանությունը

Սայիսի 6-ին Խոզուի՝ 120 տնից բաղկացած հայաբնակ մեծ գյուղի վրա հարձակվեցին Գոպալի Աջմու Ուսուփ աղայի տղաներ Ֆեզլին և Մոռոն՝ իրենց հեծելազորքով, որոնց հետևից գյուղ մոտակա շրջաններից հավաքված քրդական խուժանը։ Հայ գյուղացիների գինված խումբը դիմադրելով թշնամուն՝ ապահովեց անզեն ժողովրդի փախուստի ճամփան։ Ժողովուրդը, մաս առ մաս փախչելով, ապաստանեց Սարդմեջի անտարում, իսկ մյուս մասն էլ Հաջի Գորգի պարտեզի ծառերի մեջ[50]։ Հայերի գինված խումբը դիմելով ինքնապաշտպանության շարունակեց մարտերը մինչև երեկո։ Երբ գիշերը վրա հասավ, մարտերը դադարեցին։ Զինված խումբը մնաց իր դիրքերում, իսկ անզեն ժողովուրդը փախավ զանազան ուղղություններով։ Նոյն օրը կեսօրին Խոզուի փախուստականների մի խումբ գալիս է Հարամիկ այն ժամանակ, երբ գյուղում իջևանել էր Գայմազամ Թահիր բեյը[51]։ Երբ փախուստական խոզուցիներից երկուսը ներկայացան Գայմազամին և միամստորեն պատմեցին իրենց գյուղի ջարդերի և թալանի մասին, վերջինս անսեղյակ ծևանալով, սառնապատորեն ունկնդրելով նրանց՝ հրամայեց. «Բերդ գացէք, իմ փոխանորդս հոն է, անիկա աեստք եղած կարգադրութիւնը կընէ»[52]։

Խոզուի ինքնապաշտպանական մարտերը օրերով շարունակվեցին։ Խոզուի ջրաղացում հարամիկցիների գինված խումբը, ետ մղելով հակառակորդի գրիները, նրան պատճառելով զգալի կորուստներ, շարունակեց դիմադրել հակառակորդին, մինչև անզեն ժողովուրդը ապաստան գտավ հարկան գյուղերում։ Հաջի Գորգի այգում գարաքեռվիրեցի Բուրդաղի Տիգրանի և նրա ընկերների գինված խումբը ևս մի քանի օր շարունակ կատաղի դիմադրություն էր ցույց տալիս թշնամուն։

Քաղքիկ գյուղի հայ բնակչության կոտորածն ու դիմադրության փորձերը

Սայիսի 6-ին Քաղքիկ գյուղը, որ բաղկացած էր 110 տուն հայերից և ընդամենը 10 տուն քրդերից, ենթարկվեց Զիբրանցի և Բըլըքի աշխեթքապետների՝ Սելիմ բեյի և Սատի աղայի ղուզամների, հեծելազուկասների հարձակմանը։ Գյուղը թալանվեց, իսկ հայ

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

բնակչությունը կրտորվեց: Զարդից ազատվողները, փախչելով Հարամիկ, պատմեցին իրենց գյուղի հերոսական վախճանի մասին: Դժբախտաբար Քաղջիկ գյուղը, որ մեծամասամբ հայաբնակ էր, անհրաժեշտ դիմադրություն ցոյց չտվեց, հակառակ նրան, որ այն հայտնի էր իր հին ու փորձառու հեղափոխական հայդրիկներով, որոնցից էին Փուրթո Ղազարը, Սիմո-Օհանը, Ծեկ Հակոն, Քերի Գևոն, Իգիթի Միսակն ու Աքրոն[53]:

Քաղջիկ նշանավոր մարդկանց մեծ մասին բոլոր և քուրու ոճաւագրութները Խնուսի 150 նշանավոր մարդկանց հետ ոչնչացրել էին դեռևս ապրի ամսին: Քաղջիկի գյուղացիները գրեթե բոլորն էլ տեղափոխվեցին իրենց բարեկամ կարծած տեղի ու հարևան քրդերի մոտ՝ հավատալով, որ Վերջիններս կպաշտպանեն, սակայն անգրութեն սպանվեցին, իսկ նրանց ունեցվածքը յուրացվեց: Եղան շատ թույլ դիմադրության փորձեր, այն էլ մի խումբ երիտասարդների կողմից: Ըստ Քաղջիկ գյուղից Վերապրածներ պային՝ (ընդգծումը իմն է՝ Է.Մինասյան) Պողոս Մինասյանի և Եղբոր Մկրտիչ Մինասյանի վկայությունների (որոնց ընտանիքները ամբողջովին կրտորվել էին այդ զարդերի ժամանակ), քանի որ գյուղում գենքերը հավաքել էին մի քանի ամսի առաջ և գյուղացիները հավատով սպասում էին ռուսների գալուն, հատկապես լուրեր էին հասնում, որ թուրքական բանակը նահանջում է, իսկ ռուսները ազատագրել են Վամագկերտը, որ ուր որ է կմտնեն Խնուս: Բացի այդ հնչակեն ամբողջ Խնուսում, այստեղ ևս տեղի հայերի և հարևան քրդերի միջև համաձայնություն կար, ըստ որի՝ նրանք կպաշտպանեն տեղի հայերին թուրքերի հարձակումներից, իսկ հայերն էլ նրանց ռուսների հայտնվելու դեպքում, ուստի չեն նախապատրաստվել ինքնապաշտպանության: Ըստ նրանց, երբ քրդերը հարձակվեցին գյուղի վրա, մի խումբ երիտասարդներ դիմադրության փորձեր արեցին իրենց ձեռքն ընկած կացիններով, երկար գործիքներով, եղաններով և այլն: Սակայն ընկած թշնամու հրազենային կրակից: Նրանցից շատ քերին հաջողվեց քուրդ եղուզակներից մի քանիսին սպանելով փախչել ու ապաստանել Խալչառու և Հարամիկ գյուղերու:

Զայած արյունարբու քուրդ ցեղապետ Սելիմ բեկի ձեռքով համիդյան բռնակալության օրերին՝ մինչև 1908թ. Երիտթուրքերի հեղաշրջումն ու սահմանադրությունը, Աղջամելիք և Քաղջիկ գյուղերի միջև գտնվող Շահվերսի կամ Շահվերան կոչված ավերակների մեջ սպանվել էին քաղջիկցի նշանավոր անձանցից, Խնուսում և նրա շրջակայքում մեծ հեղինակություն վայելող Մինասի Մանուկ աղան (պային՝ Պողոս Մինասյանի հոռերայրը, - ընդգծումը իմն է՝ Է.Մինասյան) [54], սակայն քաղջիկցիների մի քանի ընտանիք զարդի օրերին միամստորեն գնաց Խըզլահմատ՝ Սելիմ բեկի գյուղը՝ նրա կնոջից գրություն հայցելու: Սակայն Վերջինին հրամանով բոլորն էլ կրտորվեցին[55]:

Զարդից միայն մի խումբ կանանց ու երեխաների հաջողվեց փախչել և ապաստանել Հարամիկում:

Ելիկիս (Էլափիս) գյուղի ինքնապաշտպանական նարտերը: Զրադացի Կրիվը

Ելիկիս գյուղը, որը բաղկացած էր 65 հայկական և 10 քրդական տներից, կրտորվեց գյուղի աղայի՝ Շյուքրիի ձեռքով: Նա Խնուս Բերդի ազդեցիկ աղաներից՝ Մահմուտ աղայի տղան էր: Համիդյան իշխանական ռեժիմի տարիներին տիրանալով Ելիկիս գյուղին՝ դարձավ այդ գյուղի աղան: Նրա կրտսեր Եղբայրը՝ Ֆարիսատինն էլ, Հարամիկ գյուղիկ Հաջի աղայի աղջկա հետ ամուսնանալով, հաստատվել էր Հարամիկում: Այդ երկու եղբայրներն էլ Մահմանադրությունից առաջ, հայկական հալածանների օրերին, ձանձված էին իրեն հայատերներ: Նույնիսկ փաստեր կային, որ նրանք օգնել էին հայ հեղափոխականներին: Հարամիկցի հայտնի հեղափոխական Հակոբ Մուրադյանի տղան՝ Տիգրանը, 1905թ. աշնանը Հարամիկ գյուղի ջրաղացի մեջ սպանել էր զիլեցի

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Փալու Օնբաշուն, որը հայ հեղափոխականներին հետապնդող ու հալածող, Հարամիկի մեջ գտնվող թուրքական զորքի, տասնյակ ասկյարների հրամանատարն էր[56]: Տիգրանը վիրավորված փախել էր Ելիխս, Շյուքրի աղայի մոտ, որը ապաստան էր տվել Տիգրանին: Անա այս նոյն Շյուքրի աղան էր, որը 1915թ. խոստացել էր պաշտպանել գյուղն ու գյուղացիներին: Սակայն, իբրև թե ապահովության համար հայերին լցուի էր գյուղի մարտագնների մեջ և դավաճանդրեն ու անզօքաբար հրդեհել էր մարտագններն ու ողջ-ողջ այրել հայ բնակչությանը[57]: Կոտորածից փրկվածների մի մասը փախչելով ապաստանել էր Խնուս բերդում: Գյուղի կորիծ երիտասարդների մի խումբ հերոսներ՝ Կոտոյի Սիսակի, Տերտերոց Վահանի, Հովհաննեսի Արշոյի, Գևորգի Հովնանի և Խուրշուտի Գաբենի ղեկավարությամբ, զինված մտնելով գյուղի ջրաղացը, կրիվ սկսեցին տունարդի ու դավաճան քուրդ Երուակապետ Շյուքրի զորքի դեմ՝ բավականին զրիեր խլելով թշնամում: Խումբը կրիվը շարունակեց մինչև ուշ երեկո, մուրն ընկանալուն պես թաքնվեցին մոտակա անձավների մեջ: Այս խումբը ղեպքերից երկու օր հետո գյուղ վերադառնալիս այնտեղ պատահնամբ հանդիպեց հարամիկից Հայկագուն Սուլրադյանին, Պողոսի Հովոյին և Բատուիհանի Մկրեին: Նրանք, զինված լինելով, խմբի հետ միասին Ելիխսի ջրաղացում դիրք բռնելով, կրվեցին թշնամու դեմ: Կրիվների ընթացքում հերոսաբար զրիվեցին Ելիխսիները և հարսմիկցի Բատուիհանի Մկրեն, ծանր վիրավորվեց Պողոսի Հովոն, իսկ Հայկագուն Սուլրադյանը, անվճաս մնալով, թաքնվեց ջրաղացում:

Թշնամին, ջրաղաց մտնելով, սպանվածների գենքերը վերցնելով, հեռացավ: Մընելուց հետո, Հայկագունը, թաքնատոցից դուրս գալով, տեսնելով, որ Հովոն ողջ է ու ժանր վիրավոր, կապեց վերքերն շալակելով հասցրեց մինչև Խնուս բերդ[58]: Այստեղ նրանք, երկուսն էլ ծերբակալվեցին ու բանտարկվեցին, որտեղ էլ նրանք բերդում հանդիպեցին Հարսմիկցի Եղիշե Մելիքյանին, որը բանտարկված էր իր հորեղբայրների հետ[59]: Այստեղ էլ նրանք պատմեցին միմյանց իրենց զիյոնի եկած փորձությունները[60]:

Խալչառուշ (Խաչալույս) գյուղի հնքնապաշտպանությունը.

Սպիտակ Քովի կրիվը, Վարագրատի հերոսանարտոց

Մայիսի 7-ին Խալչառուշ գյուղի վրա, որը բաղկացած էր 85 տուն հայ և 15 տուն քուրդ բնակչությունից (որոշ տվյալներով 200-ից ավելի հայ տներ ունեցող), հարծակվեցին նոյն գյուղի քուրդ աղաներից Սասի աղայի և զագանաբարող մյուլիդի Մոստաֆայի զինյալ ջոկատները: Նրանք, մինչանց հետ համագործակցած, խարեւությամբ և խոստումներ տալով, հավաքելով անզեն գյուղացիներին լցուեցին մի մեծ մարագի մեջ: Նույն մարագի դրան առջև զինաթափ արեցին հայտնի հայուուկ Զուկ Մոսոյին և նրա տղային տեղն ու տեղը սպանեցին[61]: Իսկ մարագի մեջ լցված ժողովրդին խմբերով դուրս տանելով՝ սպանեցին կացիններով և երկաթի այլ գործիքներով: Խմբերից մեկին էլ, մոտավորապես 80-90 հոգուց բաղկացած, տանելով Խալչառուշի լեռան վրա քրդական Քավառ գյուղում կոտորեցին[62]: Այս խմբի մեջ էին գյուղի քահանա Տեր Ավետիսին ու գյուղի ռես Քոչոն (Մովսեսը), նրա եղբոր տղան՝ Պետիկը (Բետիկ) [63]: Ռես Քոչոնին բարեկամ ծնացող քուրդ Խըրեն դավաճանելով սպանեց ռեսին: Սակայն նրա եղբոր տղան՝ Պետիկը, զինված լինելով ատրճանակով, քրդերից չորսին սպանեց, երկու հոգու էլ վիրավորելուց հետո զրիվեց հերոսի մահով: Տեր Ավետիսի քահանան նոյնպես, կրվելով մինչև վերջ, լընկավ հերոսի մահով: Բարբարոս թշնամին, դիմադրությունից զայրացած, հարձակվեց անշնչացած դիակների վրա և հոշոտելով՝ դրանք պղծեց:

Զարդերի ականատես Հարամիկ գյուղի Տեր Սողոմոն քահանայի աղջիկը՝ Շահ-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

բազզ, որ քուրդ Ալոյի կողմից առևանգվելով բերվել էր Խալչառուշ գյուղ, պատմել էր գյուղում մնացած հայ կանանց հերոսական կրիվների և ջարդի մասին[64]: Խալչառուշ գյուղացի, վերապրած Հովհաննես Ավագյանի վկայությունից պարզվում է, որ 6 տարի նա ծառայել է թուրքական բանակում որպես զինվոր, 1915թ. ծառայել է Մանագլերտ-Բերդ հատվածում, որտեղ համբարձման օրերին՝ ապրի ամսին, բժշկապետոր, արաբերեն խոսելով, հայտնել է, որ հրաման են ստացել կոտորել իրենց մոտ եղած բոլոր հայերին: Հասկանալով արաբերենը՝ Հովհաննեսը անմիջապես սպանել էր բժշկապետին ու թուրք երկու զինվորի, ապա փախչելով՝ ապաստանել էր Ալմեր գյուղում, որտեղ ռուսները ազատել էին նրան[65]: Երբ 1916թ. գարնանը այցելել է ազատագրված Խնուս, Խալչառուշ գյուղի 360 հայկական տներից տեսել է 4 տղամարդու և 4 կնոջ: Միայն իրենց տնից 15 տղամարդ ու 13 կին ու երեխա են կոտորվել[66]: 3 ամիս մնալով Խալչառուշում՝ նա վերադարձել է Նոր Բայազետ (Գավառ):

Խալչառուշ գյուղում ավելի փոքր ծավալի ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան, ինչպես Գարաքյուրիում, Խոզգուում և այլ գյուղերում: Այստեղ յայն ծավալի կազմակերպված դիմադրություն և կրիվներ տեղի չունեցան, հակառակ նրան, որ ինչպես Քաղքիկ գյուղում, այստեղ հայորուկային կրիվների մեջ թրծված կտրհճներ կային: Նրանցից էին Վրդե-Բաղեն, իրացու Օհանը, Անդրոն, աննման Հերոս Խանողիի Մարտիրոսը, Օղտոյի Դանելը, Զուլե Սոսոն և շատ ուրիշներ[67]: Նրանք կրվեցին երկու, երեք հոգով: Խալչառուշում ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան Սպիտակ Բուլ կոչված վայրում և մի քանի այլ տեղերում: Այստեղ, ինչպես մյուս վայրերում, հայ գյուղացիները, չնայած պարտվեցին, բայց կրվեցին հերոսաբար՝ ծնկի չգալով, քուրդ ջարդարարների առաջ: Այդ հերոսներից էր Վրդե-Բաղեն, որը կրվեց մինչև վերջ իր եղբոր երկու զավակների թենոյի և Մամբեթի հենու: Ղերևս ջարդերի նախօրյակին գյուղից դուրս՝ Սպիտակ Բուլ կոչված վայրում, նրանք թաքստոց պատրաստեցին և ջարդի օրը, այդ թաքստոցում դիրքեր բռնելով, կրվեցին: Թրդերը, նկատելով թաքստոցը, հարձակվեցին նրանց վրա: Կրիվը բռնկվեց նոր ուժով և քանի զնաց, թեժացավ: Թշնամին զգալի կորուստներ կրեց: Երբ նա հասկացավ, որ Բաղեն է կրվողը թարձրածայնեց՝ ասելով թե «Բաղեն խումբ կազմած է, պիտի գայ Հայերուն վրէժը լուժելու»[68]: Դժբախտաբար այդ արդար Վրեժիններությունը տեղի չունեցավ, քանզի Բաղեն տենդի մեջ էր և բարձր ցերոնությամբ մահացել էր: Մի քանի օր անց նրա դիակը գտնվեց թաքստոցի մերձակայքում՝ մի փոսի մեջ: Խսկ Բաղենի եղբոր տղաները շարունակեցին կրվել մինչև վերջ, թաքստոցից-թաքստոց տեղափոխվելով, մինչև ռուսական բանակը գրավեց Խնուսը, ու նրանք ազատագրվեցին[69]:

Թշնամու դեմ անհատական կրիվներով աչքի ընկավ Պոլսի Ռոբերտ քոլեջի ուսանող, թուրքական բանակում ծառայած և այդ ծառայությունից փախսած ու զինված զինվորական համագնեստով հայրենի Խալչառուշ գյուղ վերադարձած Վարագդաստ Անտոնյանը[70]: Նա, իր եղբոր Տիգրանի հետ միասին որսորդական հրացանով և տասնոց աստրանակներով զինված, թարձրացավ Խամբուրերու լեռը: Երբ հասան Արար քրդական գյուղը, պաշարվեցին արյունաբրու քրդերի կողմից, որոնք կատաղի կրիվ սկսեցին հայ քաջերի դեմ: Այդ կրիվների ականատես քուրդ Ալի Օգմանի մայրը հիացմունքով Խալչառուշիցի հայ կանանց պատմել է Վարագդաստի հերոսական կրվի և ցուցաբերած քաջության մասին, թե ինչպես Վարագդաստը սպանել է վեց քրդերի, ապա սպանել է վիրավորի իր եղբորը, որ քրդերի ծնորքը չըմնի: Վեցին փանկիուշով սպանել է մի քրդի և ինքն էլ զոհվել է թշնամու համազարլից[71]: Նա նահատակեց հերոսական մահով հայրենի սրբազն հողի վրա: Թուրդ կնոջ այս տեղեկությունների հիման վրա խալչառուշի հայ կանայք, գաղտնի զնալով Արար գյուղ, փնտրեցին գտան Վարագդաստի ու եղբոր

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

ոդակները և բերելով հայրենի խալչառու՝ թաղեցին հայկական գերեզմանոցում[72]:

Հայտնի խալչառուցի հեղափոխական (դաշնակցական) և հայուկ, սուրհանդակ և զինատար խմբերի վալադ Մարտիրոսը մի խումբ խալչառուցիների հետ խարվեց նենագամիտ Սատի աղայի և մյուտիր Սուստաֆայի խոստումներին: Նրանք իբրև թէ հայերի այդ խմբին ազատելու համար պահանջերի հսկողությամբ ուղարկեցին Արու գյուղի մերձակայքում գտնվող Նորեկածի վանքի քարայր՝ թաքցնելու համար, հավատացնելով, որ շուտով ուսական գորքը կառ և կազատագրի նրանց[73]: Երբ խումբը ծոր հասավ, դաշնակիրները բոլորին էլ սպանեցին, իսկ դիակները անհետացրին: Միայն օրեր անց Արջածորի մեջ հայտնաբերվեց Մարտիրոսի նշանավոր փափախը:

Զառլրմա (Զկիրմե) Գաբրիելի գոմ, Նորշեն գյուղերի հայ բնակչության կոտորածն ու դիմադրական մարտերը

Մայիսի 7-ին Զկիրմե (180 հայկական, ընդամենը 4 քրդական տուն ունեցող), Գաբրիելի գոմ՝ գուտ հայաբնակ 13 տնից բաղկացած (կրկին գուտ հայաբնակ) և Նորշեն գյուղերի հայ բնակչությունը կոստորվեց և թալանվեց հարևան Փայիկ (Հայկ) գյուղի քրդերի և խնուս բերդից եկած թալանչի թուրքերի կողմից: Թշնամու հարձակումը գյուղի վրա տեղի ունեցավ կեսօրին: Հարամիկցի Մարտիրոս Սանուկյանը, որ ուսուցիչ էր Զկիրմեում, մի խումբ գյուղացիների հետ ատրճանակով գինված դիմադրեց քրդերին՝ հնարավորություն տալով փախչող հայությամբ ապահով հեռանալու գյուղից և հասնելու Հարամիկ, իսկ մյուս մասը խնուս բերդ[74]:

Զկիրմեում մի խումբ գինված գյուղացիներ հայ քրդոքական եկեղեցում դիրքավորված՝ հին ֆիդայի Ալեքսան Քրմոյանի գլխավորությամբ, հերոսաբար կրվեցին մինչև վերջին փամփուշտը և բոլորն էլ նահատակվեցին՝ թշնամու գերազանց ուժին չղիմանալով[75]: Գաբրիելի գոմ և Նորշեն գյուղի դիմադրական փորձերը ապարդյուն անցան: Գյուղերի հայությունը ջարդի ենթարկվեց և թալանվեց:

Արոս, Սարլու (Սարլու) և Յահյա (Յայա) գյուղերի ինքնապաշտպանական մարտերը

Մայիսի 8-ին հարձակման ենթարկվեց Արոսը, որն ուներ 48 տուն հայ և 8 տուն քուրդ բնակչություն[76]: Գյուղի գինված խումբը՝ քահանայի գլխավորությամբ, ամբողջ օրը հաջողությամբ մարտնչեց քուրդ համիդիների և շրջաններից հավաքված քրդական խուժանի հրոսակախմբերի դեմ: Մարտի ընթացքում քրդերն ունեցան զգալի կորուսուները[77]: Գյուղի բնակչությունը կարողացավ փախչել և ապաստանել Արոսի հարևանությամբ գտնվող Նորեկածի նշանավոր վանքում ու Արջածորի քարայրներում, որտեղից էլ նրանք գիշերվա ընթացքում տեղափոխվեցին խնուս բերդ: Գիշերն իրենց դիրքերը թողեցին և վանք նահանջեցին նաև հայ մարտիկները: Խոր ձորում գտնվող ժայռակիր և դժվարամատչելի Նորեկածի վանքը ու հարևան քարայրներն օրեր շարունակ դարձան կրվի ասպարեզ, ուր հերոսի մահով նահատակվեցին շատ արուցիներ[78]: Մարտիկների մի մասն էլ հեռացավ խոզուի ուղղությամբ: Սակայն եղան նաև այնպիսիները, ովքեր, չհեռանալով վանքից, մարտնչեցին շատ երկար և դիմացան մինչև ռուսների գալը՝ 1916թ. փետրվար:

Խնուս բերդում պատսպարվողները տարագրվեցին, ջարդվեցին ու թալանվեցին խնուսի և Վարդոյի միջև գտնվող լեռների վրա: Այս կրիվներից մազապուրծ ազատված գյուղի քահանան, հասնելով խոզու, միացավ այստեղ հավաքված գինյալ կրվողների խմբին և օրերով կրվեց թշնամու գերազանց ուժերի դեմ: Խումբը մեծ կորուսուներ պատճառեց թշնամուն և կրվեց նրանց այնքան ժամանակ, մինչև որ ռազմանյութը ու

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

պարենը վերջացավ, ու բոլորն էլ ընկան հերոսական մահով[79]:

Մայիսի 9-ին 45 տուն հայ, 10 տուն քուրդ ընտանիքներից կազմված Սառու գյուղ[80], որը ծորակվով էր անջատված խոնուսերորդից, պաշարվեց համիդեական հեծելազորքի և պալջացի (բաղդացի) և խոլիհասարցի քրդերի կողմից և ենթարկվեց թալանի ու ջարդի: Գայմագամ Թահիր բեցր հայերին պաշտպանելու կենծ դիտավորությամբ Սառու ու ուղարկեց Հաջի Իսաֆ Էֆենդրուն չեթեների մի ջոկատով: Բայց վերջինս հայերին օգնելու փոխարեն միացավ համիդեականներին ու սկսեց ջարդն ու կողոպուտը[81]: Հոյան չորս եղբայրները, զինված, իրենց տան մեջ դիրք բռնելով, կրվեցին մինչև երեկո[82]: Կրիվը երր վերջացավ, եղբայրներից Արփիարը նկատեց, որ իր եղբայրներն ու նրանց ընտանիքները բռնորդ էլ սպանված են: Նրա կինը դիմում է Արփիարին՝ խնդրելով սպանել իրեն, որ թշնամու ձեռքք ընկնի: Արփիարը, սպանելով կնոջը, մթության մեջ խելահեղորեն դուրս է նետվում: Կրվելով տեղից-տեղ և գյուղից-գյուղ տեղափոխվելով հասնում է մինչև Զերնակա լեռը, ուր մի քանի ընկերներով, մինչև վերջին փամփուշտը կրվելով եղուզակների դեմ, սպանվում է[83]:

40 հայկական և 30 քրդական տներից բաղկացած Յահյա գյուղը, որ խնուսի դաշտից անջատված ու շրջապատված էր Կենորսուի (Գենորսու) և Թագմանի շրջանի քուրդ գյուղերով, թալանի ու ջարդի ենթարկվեց սեղենեզցի խուլիխան բեյի զբարքցի աշիրերի զինված քրդերի կողմից[84]: Զինված հայերի խումբը օրերով կրվեց քրդերի դեմ, մինչև որ բոլորն էլ կոտորվեցին՝ թշնամու գերազանց ուժերին չղինանալով: Մի քանի կանայք ու երեխաներ, կոտորածից ազատվելով, քրդերի ձեռքք գերի ընկան և նրանց մոտ մնացին մինչև որ ռուսական բանակը գրավեց խնուսն ու նրանց ազատեց գերությունից[85]:

Զարդի ու թալանի ենթարկվեց նաև Մժմկերտի, Գարապուրաքի (Կարապուրակ), Պեկուրսիի, Թանտրուի, Խոլիհասարի, Մոլա դատուի, Անտապագոմի, Խոզանի և Քոռջուրի գյուղերի հայությունը[86]: Այս քրդախառն գյուղերի մեջ հայերը կոտորվեցին իրենց հարևան քրդերի կողմից: Քոռջուր գյուղում ջաղացանությամբ գրադվոր հարամիկցի երկու եղբայրները՝ Բեկը և Լավանդը, որ հումկու և հալթանդամ մարդիկ էին, ջրաղացի կրաններով կրվեցին զինված քրդերի դեմ՝ սպանելով նրանցից մի քանի սին[87]: Եղբայրներից Բեկը սպանվեց անհավասար կրվում, իսկ Լավանդին հաջողվեց փախչել ու թաքնվել քարայրներում, մինչև որ ռուսական բանակը գրավեց խնուսը և ազատեց նրան:

Հարամիկ գյուղի հնքնապաշտպանական մարտերը

Խնուս զավարում առավել կազմակերպված և համար դիմադրություն ցուց տվեց Հարամիկ գյուղի բնակչությունը (150 տունը հայ էր, 60-ը՝ քուրքեր ու քրդեր): 1915թ. սկզբներից այստեղ գյուղում մեծ հելինակություն վայելող Տիգրան Մուրադյանի գիսավորությամբ աշխատանքներ էին տարվում գյուղի հնքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Նրա նախաձեռնությամբ հաճախ տեղի էին ունենում երեկոյան հավաքներ: Մասնակիցները՝ Հայկազուն Մուրադյանը, Ավագ Վարժապետը, Գարեգին Տեր-Սողոմոնյանը (Քամայան), Հովհաննես Մելքոնյանը, ուստա Մարկոսը, Սիերի Սեթոն, Միոն-Գուաք Միսիկը, Միրզո Մեթոն, Խչե Ավոյի Մեսրոն, Հունանի Հովեն, Խնչե Հովիկը, զափիթիա Միսալի տղա Լևոնը և Եղիշե Մելիքյանը որոշեցին թուրք-քրդական հարձակումներին դիմագրավելու համար երկու կամ չորս զինյալ երիտասարդների ուժերով սահմանել զիշերային պահակային հերթապահություն՝ հսկելով գյուղը՝ թշնամու կողմից հանկարծակի հարձակման ժամանակ խուճապի չմատոնվելու համար[88]: Վերոնշյալ խմբի անդամների մեջ մասը փորձառու և հերոսական անցյալ ունեցող հայդուկ էր: Այս

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

դրույթունը, հատկապես գյուղի հսկողությունը, շարունակվեց մինչև ապրիլ ամիսը: Տիգրան Մուրադյանը փորձեց ինքնապաշտպանական խմբեր ստեղծել նաև հարևան հայկական գյուղերում, հզոր քունոցք թուրք-օրդական ջարդարանների դեմ, սակայն հաջողություն չունեցավ: Նա գոհ գնաց գավառի երիտրուրֆական իշխանությունների խարդավանքներին և 1915թ. ապրիլին հիշատակված խնուսից 150 երևելինների հետ ծերբակալվեց ու սպանվեց:

Երբ գավառում ժայր առան հայ բնակչության զանգվածային կոտորածները, Հարամիկում բնակվող 30 թուրք ընտանիքներ, որոնց մեծ մասը սկզբում հակված էր համագործակցելու հայերի հետ ինքնապաշտպանության գործում, հայերին խոստացան սատար կանգնել նրանց այնպես, ինչպես սովորան Աբրու Համիդ 2-ի կազմակերպած ջարդերի ժամանակ թուրքերը խոստանում են համագոյուղացիններին պաշտպանել քրոնի հարձակումներից այն պայմանով, որ հայերը նոյն կերպ վարվեն ռուսների գալուց հետո[89]:

Փոխադարձ համաձայնության գալուց հետո 150 հայ ընտանիքներ փոխադրվում են իրենց թուրք համագոյուղացինների տները: Միայն թուրքական թաղին և տներին մերձակից հայ ընտանիքները չփոխադրվեցին, այլ մնացին իրենց տներում: Սակայն մի խումբ հայեր, Հակոբ Մուրադյանի գլխավորությամբ հավատ չընծայելով թուրքերին, ամրանում են Հակոբ Մուրադյանի ընդարձակ քարաշեն տաճք[90]: Վերջինս, լինելով 1890-ական թվականների հայերի ջարդերի ականատես, իր տունը կառուցել էր փոքրիկ ամրոցի նմանությամբ և գյուղի վրա իշխող պաշտպանական դիրք ուներ:

Սայսի 8-ին տեղի ունեցավ առաջին հարձակումը Հարամիկի վրա, որը հաջողությամբ ետ մղվեց: Դիմադրության ղեկավարությունը ստանձնում են Զավթիա Միսակը, Հայկագուն Մուրադյանը, Գարեգին Տեր-Սողոմոնյանը և Խչե Ավոյի Մեսրոն: Հայերի նման նախապատրաստությունները դուր չեն գալիս թուրքերին, որոնք հատուկ պատգամավորություն են ուղարկում հայ ինքնապաշտպանների մոտ և առաջարկում հանձնել գենքը՝ ընդգծելով, որ միայն այդ դեպքում իրենք կիամաձայնեն պաշտպանել հայերին: Երկարատև վիճաբանություններից հետո հայ ինքնապաշտպանները համաձայնում են հաջորդ օրը հանձնել գենքը: Սակայն լուր ստանալով դեպի Հարամիկ շարժվող քրդական ուժերի մասին՝ հրաժարվում են հանձնել գենքը[91]:

Հ. Մուրադյանի տաճք դիրքավորված հայ մարտիկները, մեծ կորուստներ պատճելով թշնամուն, հետ շարտեցին նրան: Իր դիպուկ նշանառությամբ հատկապես աչքի է ընկնում Խչե Ավոյի Մեսրոն[92]: Փաստորեն առաջին օրվա կրվին թուրք համիդինների դեմ մարտնչում էին նաև համագոյուղացի թուրքերը: Հայերին օգնության եկան նաև ջիրանցի ցեղի քրդերը: Երկրորդ օրը թուրք համիդինները և հրոսակախմբերն ավելի մեծ ուժերով հարձակվեցին Հարամիկի վրա: Քրդական այդ երկրորդ գրոհի ժամանակ հայերին պաշտպանող թուրքերը որոշեցին վտանգի չենթարկել իրենց, միանալ քրդերին ու կոտորել իրենց տներում ապաստանած հայ համագոյուղացիններին միաժամանակ յուրացնելով նրանց գույքն ու ունեցվածքը: Այդպես վարվեցին Հաջի Արիֆը, որը սպանել, տվեց իր տաճան ապաստանած թողոր հայերին, այդ թվում Զավթիա Միսակի եղբորը՝ Գասպարին: Նոյն կերպ վարվեցին Հաջի Արիֆի եղբայր Մուսա աղան և Սելիմ աղան[93]: Սակայն ոչ թողոր թուրքերը վարվեցին այդ կերպ: Նրանցից մեկը՝ Խոլլույի Հյուսինի կինը, հրաժարվեց գյուղ մտած քրդերի առջև քացել դուրը և հանձնել հայերին: Հայերից մեկը՝ Միհրագի Հյուսենի, դիպուկ կրակոցով գետին տապալեց սուս ներխուժած քրդերից մեկին: Չկարողանալով սուս մտնել՝ քրդերը հրդեհեցին այն: Քչերին հաջողվեց փրկվել[94]: Թուրք ելուզակները, մեծ ուժեր կենտրոնացնելով, գրոհ են ծեռնարկում Տ. Մուրադյանի տաճան ամրացած հայ մարտիկների դիմադրությունը կոտորելու հա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

մար: Կրկին իր դիպուկ նշանառությամբ աչքի ընկավ իչե Ավոյի Մեսրոն՝ ոչնչացնելով 10 եղուզակ: Եվ կրկին քրոջեր հարկադրված էին նահանջելու՝ իրենց հետ տանելով սպանվածներին ու վիրավորներին: Երկրորդ օրը քուրու համիդիեները և հրոսակախմբերն ավելի մեծ ուժերով հարձակվեցին Հարամիկի վրա: Ահա թե ինչ են պատմում այդ օրվա մասին հարամիկցի մարտիկներ Սիրոն Մեդրոն և Խասոն Սարգսի Ալոն: «Զարդին երկրորդ օրը երբ գյուղին վրա նորեն հարձակեցան, այնպես կրվեր թե ամբողջ Խնուսա քյուրտերը և համիդիեները հավաքված եկած էին: Ամբողջ օրը կրվեցանք: Մեզմե միայն երկու հոգի թերև վիրավորվեցան: Թշնամին շատ կորուստ ունեցավ: Մենք կենարդի մեջ, թե հայուրներով անոնցմե սպանվեցան: Իրիկվան մութին թշնամին գյուղեն քաշվեցավ, մենք ալ Հակոբի տունը լքեցինք և գացինք Տերտորոց ջաղացքը»[95]: Այդ օրը արդեն հիշատակված քաջ մարտիկ Մեսրոն, ի թիվս մի շարք համիդիեների, գնդակահարեց նաև Հարամիկի ջարդը դեկավարելու համար Խնուսից հատուկ ժամանած թուրք պաշտոնյա Քյարիա Միրզային[96]: Գյուղից հեռացած 40 հայ մարտիկները հետագա օրերին շարունակեցին պարտիզանական կողմները թուրք-քրդական ջարդարարների դեմ: Շուտով նրանց թիվը հասավ 60-ի: 60 հոգի գինված 15 հրացանով և մի քանի ատրճանակով, ամրանում են Խոզու գյուղի ջրաղացում: Այսուհե նրանք պաշարվեցին են քրոջերի կողմից: Հայերը փորձեցին ճեղքել հակառակորդի պաշարումը, սակայն 10 զոհ տալով՝ հարկադրված վերադարձան ջրաղաց[97]:

Զարդողանալով ճնշել հայերի դիմադրությունը՝ քրոջեր դիմում են խորամանկության: Նրանք առաջարկում են հայերին հանձնելու՝ խոստանալով նրանց անվնաս հասցնել Խնուս և համձնել գավառական իշխանություններին: Հայերն էլ իրենց հերթին պահանջ են դնում, որ իրենցից երեք հոգի գինված լինեն: Երկար բանակցություններից հետո քրոջերը համաձայնվում են: Եվ երբ ըստ պայմանավորվածության երեք գինված հայերը դուրս են գալիս ջրաղացից, քրոջերը, դրժելով իրենց խոստումը, կրակ են քացում և սպանում նրանց: Ապա չքողնելով, որ ներսում գտնվողները ուշքի գան, միանգամից մտնում են ջրաղաց և սպանում այնտեղ գտնվողների մեծ մասին: Միայն մի քանի հոգու է հաջողվում հրաշքով պահանձել[98]:

Այս մարտերում նրանք գոեթե բոլորն ընկան քաջի մահով: Երկօրյա օրիասական պայյքարում գոհվեց Հարամիկի հայ բնակչության մեծ մասը:

Խնուս բերդաքաղաքի կոտորածն ու ինքնապաշտպանական մարտերը

Խնուս բերդաքաղաքը բաղկացած էր 1000 տնից, որի մոտավորապես կեսը հայ էր, իսկ կեսը թուրք և քուրդ[99]:

Մայիսի 10-ին Խնուսի դաշտի բոլորը գյուղերն ավերելուց ու կոտորելուց հետո Համիդիեականներն ու քուրդ խուժանը գրոինեցին Խնուս բերդաքաղաքի վրա: Բայց կառավարչական պաշտոններությունը, ոստիկանությունն ու թուրք երևելիները վճռաբար կանգնեցրին նրանց, որպեսզի իրենք թալանեն հայերի ունեցվածքը և նոր միայն տեղահանեն[100]: Շուտով այդ օրն էլ եկավ: Հայությունը ջարդարարներին դիմադրելու ինքնապաշտպանության առանձին փորձեր արեց: Քաղաքի տարբեր վայրերում դիմադրություններ եղան: Զարդից փոլվածները պատմում էին, թե ինչպես Եղիշե Միմոյանի (Ալթիբարնազ) դեկավարությամբ մի խուժը գինված երիտասարդներ բերդի ծորաբերանի քարանձավներից մեկում մի քանի օր հերոսական կրիվ մղեցին և ընկան միայն քազմաթիվ զոհեր խելուց հետո[101]: Դիմադրության կարևոր օջախ առաջացավ Քերդաքաղաքի Չորի թաղում, 7 երիտասարդներ, թաղի որմնադիր Հոսոյի Եղբայր Էլիկը, իր 6 ընկերներով ամրանալով մի տան մեջ, մեծ թվով թուրք և քուրդ ջարդարներ ոչնչացրին ապա ստորգետնյա անցքով, Պաղչա հին բերդ նահանջելիս, զի-

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նամքերի սպառվելու պատճառով գոհվեցին[102]:

Այսպիսով՝ բերդաքաղաքի հայ բնակչության մաքրագործումով իրականացվեց խնուսի գավառի 26.000-անոց հայության ոչնչացման ծրագիրը: Ընդամենը մի քանի հազար խնուսիներ միայն հաջողվեց փրկվել թուրքական յարադամից: Նրանցից հետագայում հարյուրավորներ մոտան հայկական կամավորական զնդերի շարքերը անարդ ուժից այդարացի վրեժ լուծելու համար: Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի չափ շրջանների՝ խնուսի գավառում երիտարարությունները հայոց ցեղասպանությունը իրականացրին բացառապես քրդերի միջոցով: Դա նրանց հաջողվեց ոչ միայն այն պատճառով, որ հնարավոր չեղավ քրդերի հետ հայկապորքական միասնական ճակատ ստեղծել կամ գոնե ապահովել նրանց չեզորությունը, այլև այն պատճառով, որ ինչպես գրեթե ամենուրեք նախաձեռնությունն ամբողջովին հակառակորդի կողմն էր[103]: Այս առումով տեղին է նշել հետևյալ փաստը: 1915թ. փետրվարին, երբ Սարիդամիջի Ճակատամարտում ջախջախված թուրքական զորքերի մնացորդները նահանջում էին ամբողջ ճակատով մեկ, Միջագետքից բերված արարական դիվիզիան Շուրադի կողմից շարժվում էր դեպի հարավ-արևմուտք: Խնուսի գավառակի ծայր հյուսիս-արևելքում գտնվող հայկական Գոպալ (Կոպալ) գյուղի գինված գյուղացիները նախապատրաստվեցին հարձակվել լիովին բարոյալքված ու խառնամբոխի վերածված, ծմբային դաժան սառնամանիքներից ծանր կորուստներ կրող այդ դիվիզիայի մնացորդների վրա[104]: Չուտ ռազմական առումով գոպալցիների մոտահացումը թերևս արկածախնդրություն էր և հնարավոր չէր իրականացնել մի գյուղի ուժերով: Սակայն, մյուս կողմից, այն կծառայեր որպես ազգանշան և ոտքի կիաներ գավառակի հայկական գյուղերը, որի արդյունքում միգրացի և հնարավոր լինելու ավելի հզոր ու ավելի արդյունավետ ինքնապաշտպանություն իրականացնել, քան այն, ինչ եղավ 1915-ի մայիսին: Ցավոր, գոպալցիներին այդ ծրագրի իրականացումից «խոհեմության» իրենց կոչերով եւտ պահեց գավառակի հոգնոր առաջնորդ Արգար Վարդապետը՝ Յոթնեղբարյանը[105]: Մայիսի սկզբներին, երբ խնուսի հայկական գյուղերը մեկը մյուսի ենտևող բնաջնջվում էին քուրդ բարբարուների կողմից, միայն մի խումբ գինված գոպալցիներ՝ Գարաջորակի և Գովանդրովի խմբերի հետ միասին, կարողացան անցնել ռազմաճակատի գիծը և հասնել ռուսներին: Ինչ վերաբերում է Արգար Վարդապետին, ապա մայիսի կեսերին նա գլխավորեց խնուս քաղաքի մահվան քարավամը, որը Վարդոյի շրջանի քրդական Բազկան և չեռքեզական Զարբրիկ գյուղերի մոտ (խնուսից 30-35 կմ հարավ) գրեթե գլխովին ոչնչացվեց քրդական հրոսակախնճերի և քարավանն ուղեկցող ժանդարմների կողմից[106]: Այս քարավանի մեջ կային ամհատներ, որոնք ինչով որ կարողացել էին, կրվել էին ուղղի դեմ մինչև վերջ: Նրանցից էր բերդեցի հնավաճառ Մոճե Կարոն, որն իր ծեռքի մահակով սպանել էր երկու քրդերի և նրանց դիակներին կարչած՝ գլորվել Արածանիի ալիքների մեջ[107]: Քարավանի վերջին մնացորդների հետ էր նաև ոստիկան Արամը՝ Բերդի հանրածանոթ Հովհան Մալխասյան Էֆենդու տղան: Արամը, նկատելով թուրք ժանդարմների խիստ ու անհօգի վերաբերմունքը քարավանի նկատմամբ, իր ընտանիքով քարավանից անջատվեց և անմիջապես դիրք բռնելով՝ սկսեց կրվել: Երբ թշնամին պաշարեց նրան, հուսահատության պահին, իր ընտանիքը թշնամու գազանային արադրմերին չմատնելու մոտահոգությամբ սպանեց իր կնոջն ու զավակներին, վիրավորեց հարազատ մորդ, սպանեց մի քանի ժանդարմների, հեռացավ մոտակա անտառը, ապա թաքնվելով՝ փրկվեց ռուսների կողմից խնուսը գրավելուց հետ[108]:

Այսպիսով՝ 1915թ. մայիսին խնուսի գավառակի մեկ տասնյակի չափ գյուղեր ամենաանբարենպաստ պայմանաներում իսկ իրենց մեջ ուժ գտան ընդվզելու թուրք-քրդական զարդարարներ դեմ և մղելու 1-3-օրյա ինքնապաշտպանական կրիվները: Դրանով հա-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

զարավոր խնուսահայեր եթե չփրկեցին իրենց կյանքը, ապա փրկեցին գեր սեփական արժանապատվությունը և իրավունք նվաճեցին իրենց արժանապոր տեղը ունենալու հայոց մեջ եղեռնի տարիներին տեղի ունեցած հերոսամարտերի շարքերում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Տե՛ս Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր, Եր., 2012, էջ 160:
2. Տե՛ս նույն տեղում, էջ 655, 698:
3. Ա-Ղո, Մեծ դեպքերը Կասպուրականում 1914-1915 թվականներին, Եր., 1917, էջ 9:
4. Տե՛ս Խնուս գավառ (1914թ. դրությամբ), քարտեզ, հեղինակ Գ.Մ.Բադայան, խմբ. Է.Մինասյան, Եր., 2005:
5. Տե՛ս Սասունի Կ., Պատմութիւն Տարօն Աշխարհի, Անթիլիաս, 2013, էջ 734:
6. Տե՛ս Մելիքիան Ե., Հարք Խնուս, Եր., 1964, էջ 271:
7. Տե՛ս նույն տեղում:
8. Տե՛ս նույն տեղում:
9. Տե՛ս նույն տեղում, էջ 272, 273:
10. Վերապրած Եղիշե Մելիքյանի վկայությունը Կարինի գավառի Խնուս գավառակի գյուղերի հայության տեղահանության և կոտորածների մասին, տե՛ս, 1915 թ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, Երգորումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրավիզոնի նահանգներ, Պարսկահայք, Եր., 2012, էջ 114:
11. Տե՛ս նույն տեղում, էջ 113:
12. Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 733:
13. Տե՛ս նույն տեղում:
14. Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 737
15. Տե՛ս նույն տեղում:
16. Տե՛ս Թադևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 160:
17. Տե՛ս նույն տեղում:
18. Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 273:
19. Տե՛ս նույն տեղում:
20. Տե՛ս նույն տեղում:
21. Տե՛ս նույն տեղում, էջ 48:
22. Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 738:
23. Տե՛ս նույն տեղում:
24. Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 87:
25. Տե՛ս նույն տեղում, էջ 739:
26. Տե՛ս նույն տեղում:
27. Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 739:
28. Տե՛ս Մելիքեան Ե., նշվ. աշխ., էջ 35:
29. Տե՛ս Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և նքնապաշտպանական կրիվները 1915 թվականին, Եր., 2005, էջ 290:
30. Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 739:
31. Տե՛ս նույն տեղում:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԽՈՏՏՈՒ 2016

- 32.Տե՛ս նույն տեղում, էջ 740:
- 33.Տե՛ս, Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 276:
- 34.Տե՛ս, ՀԱԱ (*Հայաստանի ազգային արխիվ*), ֆ 227, գ 1, գ 425, թ. 19-24:
- 35.Տե՛ս, նույն տեղում:
- 36.Տե՛ս, Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 276, 277:
- 37.Վերապրած Կարապետ քահանա Տեր-Հովհաննիսյանի վկայությունը Կարինի գավառի Խնուս գավառակի Գարազոպան գյուղի հայության տեղահանության և կոտորածների մասին, տե՛ս, 1915թ, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ, Հայաստանի ազգային Արխիվ, հ. 3, Երգրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Եր., 2012, էջ 117:
- 38.Տե՛ս նույն տեղում, էջ 119:
- 39.Տե՛ս նույն տեղում, էջ 120:
- 40.Տե՛ս նույն տեղում:
- 41.Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 277:
- 42.Տե՛ս նույն տեղում:
- 43.Տե՛ս նույն տեղում:
- 44.Տե՛ս նույն տեղում, էջ 278:
- 45.Տե՛ս նույն տեղում:
- 46.Տե՛ս նույն տեղում:
- 47.Տե՛ս նույն տեղում:
- 48.Տե՛ս նույն տեղում, էջ 278, 279:
- 49.Տե՛ս նույն տեղում, էջ 279:
- 50.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 742:
- 51.Տե՛ս նույն տեղում, էջ 743:
- 52.Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 280:
- 53.Տե՛ս նույն տեղում, էջ 280:
- 54.Տե՛ս նույն տեղում, էջ 93:
- 55.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 743:
- 56.Տե՛ս նույն տեղում, էջ 743, 744:
- 57.Տե՛ս նույն տեղում, էջ 744, 745:
- 58.Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 281:
- 59.Տե՛ս նույն տեղում:
- 60.Տե՛ս նույն տեղում:
- 61.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 744:
- 62.Տե՛ս նույն տեղում:
- 63.Տե՛ս նույն տեղում, էջ 745:
- 64.Տե՛ս նույն տեղում:
- 65.Վերապրած Հովհաննես Ավագյանի վկայությունը Կարինի գավառի Խնուս գավառակի Խալիլ Չավուշ գյուղի կոտորածների մասին, տե՛ս 1915, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, Վերապրածների վկայություններ, փաստաթթերի ժողովածու, Երգրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, հ. III, Եր., 2012, էջ 122, նաև ՀԱԱ, ֆ. 227, գ. 1, գ. 430, թ. 46:
- 66.Տե՛ս նույն տեղում, ՀԱԱ, ֆ. 227, գ. 1, գ. 430, թ. 46:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀԾՈՅՑ ՀԱՍԱԼԱՄԱՐՄՆԻ ՂՈՒՏԾՈՒ 2016

- 67.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 745:
- 68.Տե՛ս նույն տեղում:
- 69.Տե՛ս նույն տեղում:
- 70.Տե՛ս Մելիքեան Ե., նշվ. աշխ., 282:
- 71.Տե՛ս նույն տեղում:
- 72.Տե՛ս նույն տեղում, էջ 283:
- 73.Տե՛ս նույն տեղում:
- 74.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 746:
- 75.Տե՛ս նույն տեղում:
- 76.Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 32:
- 77.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 747:
- 78.Տե՛ս նույն տեղում:
- 79.Տե՛ս նույն տեղում:
- 80.Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 87:
- 81.Տե՛ս նույն տեղում:
- 82.Տե՛ս նույն տեղում, էջ 284, 285:
- 83.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 748:
- 84.Տե՛ս նույն տեղում:
- 85.Տե՛ս նույն տեղում:
- 86.Տե՛ս նույն տեղում:
- 87.Տե՛ս նույն տեղում:
- 88.Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 285, 286:
- 89.Տե՛ս նույն տեղում:
- 90.Տե՛ս նույն տեղում:
- 91.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 751, 752:
- 92.Տե՛ս նույն տեղում, էջ 753:
- 93.Տե՛ս նույն տեղում:
- 94.Տե՛ս նույն տեղում:
- 95.Տե՛ս նույն տեղում, էջ 757:
- 96.Տե՛ս նույն տեղում, էջ 753:
- 97.Տե՛ս նույն տեղում:
- 98.Տե՛ս Մելիքյան Ե., նշվ. աշխ., էջ 296:
- 99.Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, Վերապրածների վկայությունները փաստաթղթերի ժողովածու, հ. 3, էջ 123:
- 100.Վերապրած Հայկանուշ Հիոյանցի վկայությունը Կարինի գավառի
- 101.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 760:
- 102.Տե՛ս նույն տեղում:
- 103.Տե՛ս Թադևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 163:
- 104.Տե՛ս նույն տեղում:
- 105.Տե՛ս նույն տեղում:
- 106.Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 760:
- 107.Տե՛ս նույն տեղում:
- 108.Տե՛ս նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Խնուս գավառի հայկական գյուղերի ինքնապաշտպանական
հերոսամարտերը 1915 թ.
Էդիկ Մինասյան

Սույն հոդվածում ներկայացվում են հայոց Մեծ Եղեռնի՝ ցեղասպանության պատճառները, դրանց ծանր ու անդառնալի հետևանքները ամբողջ արևմտահայության, այդ թվում՝ Խնուս գավառի հայաբնակ գյուղերի վրա: Հոդվածն առաջին անգամ անդրադարձում է Խնուս գավառի հերոսական ինքնապաշտպանական մարտերին՝ ցոյց տալով, թե ինչպես Արևմտյան Հայաստանի նահանգների, գավառների, հայաբնակ գյուղերի ննան խնուսահայությունը ևս գերադասեց պատվավոր մահը տարագրության ձանապարհների տանօջակից ոչնչացումից: Խնուսահայությունը հայաբնակ գյուղերի մեծ մասում զենքը ծեռքին մարտնչեց թուրք-քրդական իրոսակների դեմ՝ նրանց հակադրելով իր դարավոր դիմադրական ոգին: Նրանք դյուցազնամարտ նշեցին անարգ թշնամու դեմ՝ ընկնելով հերոսի մահով և փրկելով ցեղի անունը, դրա հետ մեկտեղ՝ նրա գոյությունը:

РЕЗЮМЕ

Героическая самооборона жителей провинции Хнус в 1915 году.
Эдик Минасян

Ключевые слова: провинция Хнус, оборонительные бои, крепость Хнус, Гарачопан, Говандук, Арамик, Кахкик, Чаурме, Арос, Харк-Хнус, битва при Джрагаце.

В статье представлены причины и тяжелые необратимые последствия Геноцида армян для всего западного армянства, в том числе населенных деревень провинции Хнус. В статье впервые рассматривается героическая оборона провинции Хнус, показывается, как жители провинций и деревень Западной Армении предпочли почетную смерть на дорогах изгнания мучительному уничтожению. Армяне, населяющие Хнус, с оружием в руках боролись против турецко-курдских банд, отстаивая многовековой героический дух. Они боролись против подлого врага, пав героями во имя спасения рода и вместе с тем своего существования.

SUMMARY

Heroic self-defense activity of Khnus province inhabitants in 1915
Edik Minasyan

Keywords: Khnus province, defensive battles, Khnus fortress, Garachopan, Govanduk, Aramik, Kakhkik, Chaurme, Aros, Hark-Khnus, the Battle of Dzhragats.

The article presents the causes and serious irreversible consequences of the Armenian Genocide for the whole Western Armenians, including populated villages of the Khnus province. This article examines the heroic defense of the Khnus province, demonstrates that the inhabitants of the Western Armenian provinces and villages preferred honorable death on the roads of exile to painful destruction. Armed Armenian inhabitants of Khnus fought against the Turkish-Kurdish gangs, defending old heroic spirit. They fought against the vile enemy and fell heroes for the salvation of the nation and its existence.